

նիներու հանդեպ» (գերմ. բնագիր՝ „Ehrfurcht vor den Tieren“): Իսկ Հ. Եոնասի բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ «*Պատասխանատուութեան սկզբունքը – բարոյագիտական փորձ մը տեխնոլոգիական քաղաքակրթութեան համար»* (գերմ. բնագիր՝ „Das Prinzip Verantwortung - Versuch einer Ethik für die technologische Zivilisation“ (1979 թ.):

Ժամանակակից աստրալիացի բարոյագետ-փիլիսոփայ **Պ. Սինգեր** (Peter Singer, *1946 թ.) իր բարոյագիտական գիրքերուն, հրապարակախօսութեան եւ բազմաթիւ օրինակներուն մէջ մեծ ջատագովը կը հանդիսանայ *բնապահութեան բարոյագիտութեան* (Environmental Ethics): Սինգերի համաձայն, բնապահականութեան առարկայ պէտք է ըլլան՝ հողն ու ջրաշխարհը, օդն ու կլիման, բուսական ու կենդանական աշխարհները:

Բ.- Տնտեսութեան Բարոյագիտութիւն

Տնտեսական գործընթացի բարոյական քննարկման ու արդարացման պահանջը երեւան եկաւ 20-րդ դարու երկրորդ կիսուն միայն: Երկարատեւ այն համոզումը կը տիրէր, որ տնտեսութեան ու ճարտարարուեստի հետ կապուած հարցերը ընդհանրապէս ենթակայ չեն կամ պէտք չէ ըլլան բարոյական գաւազան սկզբունքներուն:

1970-ական թուականներուն միայն, սկսաւ բարձրաձայն խօսուիլ գործատեւներու «*ընկերային պատասխանատուութեան*» (Social Responsibility) մասին. պատասխանատուութիւն մը, որ գործատիրոջ կողմէ կը տարածուի թէ՛ գործաւորին վրայ եւ թէ՛ բնութեան վրայ: Այս մարզին մէջ անուանի դարձաւ ամերիկացի բարոյագետ-փիլիսոփայ **Ջ. Ռաուլս**, ինչպէս նշեցինք (էջ 120), իր «Արդարութեան տեսութիւն մը» („A Theory of Justice“, 1971 թ.) հռչակաւոր երկով:

Տնտեսութեան բարոյագիտութեան հիմնական չորս արժէքները կը հանդիսանան.- *մարդկայնութիւնը* (Humanity), *համերաշխութիւնը* (Solidarity), *պատասխանատուութիւնը* (Responsibility) եւ *արդարութիւնը* (Justice):

Տնտեսութեան բարոյագիտութեան պարտականութիւնը չէ տնտեսական վարմունքի ու վարուելակերպի ցուցմունքներ կամ հրահանգներ մշակելը, այլ այժմեական հարցերու կողմնորոշման օժանդակութիւնը՝ քննադատական վերլուծման միջոցով: Այս իմաստով, տնտեսութեան բարոյագիտութիւնը կարիքը ունի քննախօսութեան, որուն պէտք է մասնակցին տարբեր մասնագիտութիւններ ունեցող մարդիկ (փիլիսոփայ, տնտեսագետ, ընկերաբան եւ այլն...):

Գ.- Բժշկութեան Բարոյագիտութիւն

Բժշկութեան բարոյագիտութիւնը ծագում առած է Հիպպոկրատեսի (Hippocrates, յուն.՝ Hippokratēs 460 – 370 մ.թ.ա.) օրերուն եւ ծանօթ է «*Հիպպոկրատեան երդում»* անունին տակ: Այդ երդումով բժիշկը կը պարտաւորուէր բարոյական սկզբունքները յարգել թէ՛ հիւանդներուն եւ թէ՛ դարմանական եղանակներուն հանդեպ: Ժամանակի ընթացքին, այդ երդումը փոփոխութեան